342-8
Z-94

1927

Գրոսեցարներ բոլոր լեռկրների, միացեք!

342.8
Հ-94

Վ. Ս. Խ. Հ.

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ, ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ-ԲՈՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՄԻՆ

Հրատարակություն Վ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի

Թիֆլիս, 1927

14 JUN 2013
18631
35.674
18 MAR 2010
ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԱԳՐ.ԳԻՏ
Ա. Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
ԱՆՎԱՆ
604553

ՎՈՐՈՇՈՒՄ

Խորհուրդների Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Խորհուրդների ընտրության հրահանգը հաստատելու մասին:

Վրաստանի Սոց. Խորհրդ. Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի հիման վրա Խորհուրդների Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վ ո ր ո շ ո ւ մ է՝

1. Հաստատել Բանվորական, Գյուղացիական և Կարմիր բանակայինների պատվիրակների խորհուրդների ընտրությունների և Խորհուրդների Համագումարներ հրավիրելու մասին ստորև բերած հրահանգը:

2. Սույն վորոշումն ընդունելու որից վերացվում է Բանվորական, Գյուղացիական և Կարմիր բանակայինների պատվիրակների Խորհուրդների ընտրությունների և Խորհուրդների Համագումարներ հրավիրելու մասին հրահանգը, վորը հաստատել է Համավրացական Կենտրոնական գործադիր Կոմիտեն 1926 թ. դեկտեմբերի 28-ին:

3. Նույն որվանից համարել ույժը կորցրած խորհուրդների ընտրություններ կատարելու համար սահմանած կարգից մի քանի բացառություններ Թիֆլիս քաղաքի նկատմամբ սահմանելու մասին Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1927 թ. հունվարի 11-ի № 1 վորոշումը:

4. Աբխազիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, Սճարիստանի Ինքնավար Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Հարավ-Ոսեթիայի Ինքնավար Շրջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին իրավունք է վերապահվում սույն վորոշման 1-ին հոդվածում մատնանշած հրահանգի մեջ մուծել կենցաղի առանձնահատկություններից և տեղական այլ պայմաններից

բղխող վորոշումներ, լրացումներ, նախապես ստանալով Համավրացական Կենդրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության սույն լրացումների հաստատությունը։

Խորհուրդների Համավրացական Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի Նախագահի Տեղակալ՝ Ս. Թոդրիա

Խորհուրդների Համավրացական Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ Շ. Մաթիկաշվիլի

1927 թ. դեկտեմբերի 16-ին
Թիֆլիս—Պալատ։

ՀՐԱՀԱՆԳ

Բանվորական, գյուղացիական յեվ կարմիր-բանակայիններ պատվիրակների խորհուրդների ընտրությունների յեվ Խորհուրդների Համագումարների գումարման մասին։

ԳԼՈՒԽ I

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

1. Խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն անկախ ազգությունից, ցեղից, նստակեցությունից և այլն՝ Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության մինչև ընտրության որը 18 տարին լրացած հետևյալ քաղաքացիները.

ա) Բոլոր արտադրող և հասարակաղուտ աշխատանքով ապրուստի միջոցներ ձեռք բերողները, ինչպես որինակ՝ առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ զբաղված ամեն տեսակի և կատեգորիայի բանվորներն ու ծառայողները, շահ ստանալու նպատակով վարձու աշխատանքով չզբաղվող գյուղացիները, տընայնագործները և արհեստավորները, խորհրդային հիմնարկություններում ծառայողներն և այլն, նույնպես և տնային տնտեսությամբ առաջինների համար աշխատանքի հնարավորություն ընձեռնողները.

բ) Բանվորա-գյուղացիական կարմիր զորքի և նավատորմղի կարմիր բանակայիններն և կարմիր նավատիները։

Ծանոթություն։ Վերև մատնանշած քաղաքացիները (սույն հոդվածի «ա» և «բ» կետ.) չեն կորցնում իրենց ընտրական

իրավունքն և այն դեպքում, յեթե կորցրել են աշխատունակությունը կամ ժամանակավորապես մնացել են առանց գործի։

2. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության քաղաքացիներին՝ հավասար ակտիվ և պասիվ ընտրական իրավունք ունեն այլ խորհրդային հանրապետությունների քաղաքացիները, վորոնք գտնվում են Վրաստանի Սոց. Խորհրդ. Հանրապետության տերիտորիայի վրա, յեթե նրանք համապատասխանում են առաջին հոդվածով նախատեսված պայմաններին։

3. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, ղեկավարվելով բոլոր ազգերի աշխատավորների համերաշխության սկզբունքով, Վրաստանի ՍԽՀ քաղաքացիների բոլոր քաղաքական իրավունքների հետ միասին տալիս է ընտրության ակտիվ և պասիվ իրավունք և այն ոտարյերկրացիներին, վոր աշխատանքային զբաղմունքների համար ապրում են Վրաստանի տերիտորիայի վրա և պատկանում են բանվորական դասակարգին կամ վարձու աշխատանքից չոգտվող գյուղացիությանը։

4. Զեն ընտրում և չեն կարող ընտրվել խորհուրդների համար, նույնիսկ յեթե վերոյիշյալ կատեգորիաներից մեկն ու մեկին պատկանելիս լինեն՝

ա) այն անձինք, վոր շահ ստանալու նպատակով ոգտվել կամ ոգտվում են վարձու աշխատանքով.

բ) այն անձինք, վոր ապրել կամ ապրում են անաշխատ յեկամուտներով, ինչպես որինակ՝ գրամագլխի տոկոսներով, ձեռնարկությունների շահով, դույքի հասույթով և այլն.

գ) այն անձինք, վոր զբաղվել են կամ այժմ զբաղվում են մասնավոր առևտրով, նոյնպես և առևտրական և վաճառականական միջնորդությամբ.

դ) բոլոր դավանությունների և աղանդների կրոնական պաշտամունքի նախկին և այժմյան սպասավորները.

ե) այն անձինք, վոր ցարական կառավարության որոք ծառայել են վոստիկանության մեջ, ժանդարմների առանձին կորպուսում, պաշտպանողական բաժանմունքներում և մենշեվիկյան կառավարության ներքին գործոց մինիստրությանն առընթեր առանձին բաժնում, Ռուսաստանում թագավորած տան անդամները, նույնպես և

այն անձինք, որոնք ղեկավարել են վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ գնդերի գործունեությունը։

զ) այն անձինք, որ քրեական դատարանի որոշքի ուժով ստացած վճիռներով դատապարտված են սոցիալական պաշտպանության այնպիսի միջոցի, որի հետևանքով զրկված են իրավունքից դատավճռով սահմանած ժամանակի ընթացքում.

ը) սահմանված կարգով հոգեպես հիվանդ և խելակորույս ճանաչվածները, նույնպես և խնամակալության տակ գտնվողները։

5 Քաղաքացիների առանձին կատեգորիաներից չեն կարող ոգտվել ընտրական իրավունքով՝

ա) այն հողագործները, որոնք կիրառում են սեզոնային և մշտական վարձու աշխատանք այնպիսի ծավալով, որ նրանց տնտեսությունը չի կարող համարվել աշխատավորական տնտեսություն։

Ծանոթություն։ Աշխատավորական տնտեսության հիմնական հատկանիշն է տվյալ դեպքում վարձու աշխատանքի ոժանդակիչ բնույթը, տնտեսության ամենորյա աշխատանքի մեջ ընտանիքի բոլոր աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությունը։

բ) այն հողագործները, որոնք հողագործական տնտեսության հետ միասին ունեն արհեստային և արդյունաբերական ձեռնարկություններ (ջրաղաց, սղոցարան և այլն) ուր մշտապես կամ որոշ սեզոնի ընթացքում կիրառվում է վարձու աշխատանք.

գ) այն անձինք, որոնք ծառայագրում են տեղական աղդաբնակչությունը, սիստեմատիկաբար վարձու տալով նրան գյուղատնտեսական մեքենաներ, աշխատավոր անասուն և այլն, կամ մշտապես ապրանքային կամ դրամական վարկ են տալիս բնակչությանը ծառայագրական պայմաններով։

դ) մշտապես բանվորական վարձու ուժ կիրառող տնայնագործներն և արհեստավորները, յեթե նրանք չեն յենթարկվում սույն հրահանգի 6-րդ յոդվածի «ը» կետի ներգործությանը.

ե) արդյունաբերական տիպի ձեռնարկությունների տերերը, որոնք շահագործում են աղդաբնակչությունը, տուն տալով այս կամ այն աշխատանքը.

զ) գործարանային տիպի ձեռնարկությունների տերերը կամ վարձողները.

ը) սպիտակ գորքերի նախկին սպաներն և պաշտոնյաները,

նույնպես և հակահեղափոխական բանդաների ղեկավարները, յեթե նրանց ընտրական իրավունքները չեն վերականգնված ԽՍՀՄ կամ դաշնակից Հանրապետություններից մեկն ու մեկի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հատուկ վորոշումներով.

թ) այն անձինք, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ղեկավարել են վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեությունը թե ցարիզմի շրջանում, և թե սպիտակ հեղափոխական կառավարությունների որոք, ինչպես որինակ՝ նախկին մինիստրները և նրանց ոգնականները, մինիստրության դեպարտամենտների տեսուչները, գեներալ-նահանգապետները, կառավարչապետները, զինվորական և քաղաքացիական նահանգապետները ու նրանց ոգնականներն, աղնվականության նահանգական և գավառական պարագլուխները, առանձին հանձնարարության պաշտոնյաները, ավագ նախագահները, քրեական դեպարտամենտների նախագահներն և անդամները, նույնպես և դատաստանական պալատների դատախազներն և նրանց ոգնականները, կարևորագույն գործերի քննիչները, զինվորական դատարանների նախագահներն և անդամները, զինվորական քննիչները, զինվորական դատախազներն և նրանց ոգնականները, նահանգական վարչության անդամները, գեմսկի պետերն և գավառապետները, ներքին գործոց մինիստրության պաշտոնյաները և քանտային տեսչության ծառայողները, նույնպես Վրաստանի մենշևիկյան կառավարության որոք հետևյալ պաշտոններ վարողները՝ մինիստրներն և նրանց ոգնականները, գեներալ-նահանգապետները, նահանգապետներն և արտակարգ կոմիսարները, ժողովրդական գվարդիայի շտաբների նախագահներն և անդամները, արտակարգ և զինվորա-դաշտային դատարանների անդամներն և դատախազները, ներքին գործոց մինիստրության դիվանատան տեսուչն և փոխ տեսուչը, նույն մինիստրության վարչական բաժնի պետն, նրա ոգնականն և վարչության բանտերի տեսուչները.

ժ) վարչական կարգով աքսորվածները, նույնպես և այն անձինք, որոնց վերաբերյալ տեղի չի ունեցել դատական վճիռ, որոնք զրկում է նրանց ապրելու իրենց նախկին բնակավայրում՝ հանցավոր միջավայրի հետ կապ ունենալու հետևանքով և կալանատեղերում գտնվողները։

6. Զեն զրկվում ընտրական իրավունքներից հետևյալ կատեգորիաներին պատկանող անձինք՝

ա) այն հողագործները, վորոնք իրենց տնտեսության մեջ կիրառում են մի մշտական բանվորի վարձու աշխատանք առանձին հանգամանքներում, ինչպես որինակ՝ հիվանդության, զորաժողովի, հասարակական այնպիսի պաշտոն հանձն առնելու հետևանքով, վոր խանգարում է տնտեսությամբ պարապելու և այլն, բոլոր այն ժամանակաշրջանի ընթացքում, յերբ տնտեսությունը գտնվում է տրվյալ վիճակի մեջ.

բ) այն հողագործները, վոր յեռուն աշխատանքի ժամանակ՝ հաց, խոտ, բամբակ և այլ տեխնիկական մշակույթներ ջրելու և ժողովելու, խաղող քաղելու կամ այլ շտապ աշխատանք կատարելու համար կարճ ժամանակով վարձում են յերկուսից վոչ ավելի բանվոր.

գ) այն գյուղացի-հողագործները, վորոնք գնում են սեզոնային աշխատանքների և այդ ժամանակվա համար վարձում է մի բանվոր, յեթե ընտանիքում չկա աշխատունակ անդամ.

դ) այն գյուղացիները, վորոնք ոգտվում են մի հովվի վարձու աշխատանքով, յեթե հովվի աշխատանքը ոժանդակ բնույթ է կրում և ներկա գտնվող աշխատունակ անդամները մասնակցում են տնտեսության ամենորյա աշխատանքին.

ե) այն անձինք, վորոնք վարում են աշխատավորական գյուղական տնտեսություն և շուկա յեն հանում իրենց տնտեսության մթերքները.

զ) արդյունաբերական ձեռնարկությունների այն վարձակալները, վորոնք չեն կիրառում վարձու աշխատանք և վարձակալած ձեռնարկություններում աշխատում են իրենք և իրենց ընտանիքի անդամները, յեթե նրանք չեն զրկվում ընտրական իրավունքից սույն հրահանգի այլ հոդվածների հիման վրա.

ը) այն տնայնագործներն և արհեստավորները, վորոնք վարում են աշխատավորական տնտեսություն առանց կիրառելու վարձու աշխատանք (կամ աշխատանքը դուրսը տալով, յեթե արհեստանոցի ունեցած սարքավորումը հնարավորություն չի տալիս կատարելու բոլոր աշխատանքը), նույնպես նրանք, վոր արտադրության պայմանների հետևանքով ոգտվում են մի հասակավոր բանվորի կամ յերկուսից վոչ ավելի աշակերտի աշխատանքով։

Ծանոթություն: Արտադրական պայմաններ ասելով հասկացվում է

միմիայն տեխնիկական պայմանները, յերբ արհեստի տեսակը պայմանավորում է վարձու աշխատանք կիրառելու անհրաժեշտությունը (որինակ մուրճ խփողը դարբնի համար և այլն)։

թ) այն անհատները, վոր տոկոս են ստանում աշխատավորական գանձարկղներին հանձնած ավանդներից և պետական, կոմունալ և կոոպերատիվ փոխառությունների պարտատոմսերից, յեթե այս յեկամուտները նրանց գոյության համար հիմնական աղբյուր չեն ծառայում կամ յեթե սույն անձինք այլ հիմունքներով չեն զրկված ընտրական իրավունքից.

ժ) այն անհատները, վորոնք առանձին հանգամանքների պատճառով զբաղվում են մանր առևտրով, ինչպես որինակ՝ աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, վորոնք առևտուր են անում Սոցիալական Ապահովագրության Ժողովրդական Կոմիսարիատի ձրի պատենտներով, առաջին կարգի պատենտով առևտուր անող գործազուրկ բանվորներն և ծառայողները, յեթե նրանք ժամանակավորապես են զբաղվում առևտրով։

ի) այն անձինք, վոր վարձով կամ կրոնական համայնքների ընտրությամբ կատարում են վարչական-տնտեսական կամ տեխնիկական ֆունկցիաներ՝ կրոնական պաշտամունքների շինությունները կամ կրոնական ծեսերը սպասավորելու նկատմամբ, ինչպես որինակ՝ պահապանները, յերգիչները, յերգեցիկ խումբ կառավարողներն և այլն, նույնպես և յեկեղեցական խորհրդի անդամները, յեթե նրանք այլ հիմունքներով զրկված չեն ընտրական իրավունքից.

լ) այն բանվորները, աշխատավոր գյուղացիները, կազակները, արհեստավորներն ու տնայնագործները, վորոնք զորաժողովի հետևանքով ժամանակին ծառայել են սպիտակ զորքերի շարքերում.

խ) սպիտակ զորքերի նախկին այն սպաները և զինվորական պաշտոնյաները, վորոնք հետագայում յեղել են բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի և բանվորա-գյուղացիական Կարմին Նավատորմիղի շարքերում և ակտիվ մասնակցություն են ցույց տվել Խորհրդային իշխանության զինված պաշտպանության գործում, նույնպես և նրանք, վորոնք ներկայումս Կարմիր Բանակում և Կարմիր Նավատորմիղում իսկական զինվորական ծառայության մեջ են.

ծ) ազատ պրոֆեսիաներին պատկանող անձինք, յեթե նրանք զբաղվում են հանրոգուտ աշխատանքով և այլ հիմունքներով զրկված չեն ընտրական իրավունքից.

կ) ընտրական իրավունքից զրկված անհատների ընտանիքի անդամները, յեթե նրանք կախում չունեն ընտրական իրավունքից զրկվածներից և ապրում են հանրոգուտ աշխատանքով։

7. Սույն հրահանգի 4-րդ հոդվածի «ե» կետի զորությամբ ընտրական իրավունքից զրկվածները (վոստիկանության նախկին ծառայողներն և այլն) կարող են մասնակցել ընտրություններին, յեթե նրանց ընտրական իրավունքը վերականգնված է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության հատուկ վորոշումով, համապատասխան որենքով նախատեսված կարգով (Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1925 թ. դեկտեմբերի 4-ի № 47 դեկրետը)։

8. Այն անձինք, վոր անցյալում կիրառել են վարձու աշխատանք շահ ստանալու նպատակով, ապրել են անաշխատ յեկամուտներով, պարապել են առևտրով կամ առևտրական միջնորդությամբ, ապրել են կրոնական պաշտամունքի պարտավորություններ կատարելու համար ստացած յեկամուտով, նույնպես և սպիտակ զորքի սպաներն և պաշտոնյաների թվին պատկանող անձինք (4-րդ հոդվ. «ա», «բ», «գ» և «դ» կետերը և 5-րդ հոդվ. «ը» կետը) կարող են իրավունք ստանալ մասնակցելու ընտրություններին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վորոշումով, յեթե նրանք վոչ պակաս քան յերեք տարի զբաղվել են արտադրական և հանրոգուտ աշխատանքով և ապացուցել են իրենց ուղղամտությունը դեպի Խորհրդային իշխանությունը, վորպիսի հանգամանք հաստատում է այն հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունը, վորտեղ աշխատում է ընտրական իրավունքը վերականգնել ցանկացող անձը. նույն հանգամանքը կարելի յե հաստատել պատվիրակների խորհրդի կամ վորևե վարչական մարմնի հավաստագրով։ Ընտրական իրավունքը վերականգնելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վորոշումները ներկայացնվում են ի հաստատություն Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը։

Ծանոթություն։ Ընտրական հանձնաժողովների աշխատանքներն ավարտելուց հետո սույն հոդվածում մատնանշած անձանց ընտրական իրավունքն անմիջապես լուծում է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։

9. Ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն լրացնելու կամ փոփոխելու սույն գլխում մատնանշած անձանց ցանկը։

ԳԼՈՒԽ II

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Խորհուրդների ընտրություններ կատարելու համար կազմվում են հետևյալ ընտրական հանձնաժողովները.

ա) Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով.

բ) Աբխազիայի Սոց. Խորհրդ. Հանրապետության, Աճարիստանի Ինքնավար Սոց. Խորհրդ. Հանրապետության և Հարավ-Ոսեթիայի Ինքնավար Շրջանի ընտրական հանձնաժողովներ.

գ) Գավառական ընտրական հանձնաժողովներ.

դ) քաղաքային ընտրական հանձնաժողովներ.

ե) քաղաքներում ռայոնական ընտրական հանձնաժողովներ.

զ) Թեմական ընտրական հանձնաժողովներ։

Ծանոթություն 1։ Այն վայրերում, ուր գոյություն ունեն գյուղական խորհուրդներ բացի վերև հիշած հանձնաժողովներից կազմվում են գյուղական ընտրական հանձնաժողովներ։

Ծանոթություն 2։ Ընտրական հանձնաժողովի անդամները հանձնաժողովում կատարած իրենց աշխատանքի համար առանձին վարձատրություն չեն ստանում։

11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, 23 անդամից բաղկացած, կազմում է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն՝ ղեկավարելու համար ամբողջ Հանրապետության մեջ կատարվող ընտրությունները։

Բացի ընտրական կամպանիայի ընդհանուր ղեկավարությունից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնարարվում է նաև քաղաքային, գավառական, ինքնավար հանրապետությունների և շրջանի ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ արված գանգատների քննությունը։

12. Աբխազիայի դաշնակից Սոց. Խորհրդ. Հանրապետության, Աճարիստանի Ինքնավար Սոց. Խորհրդ. Հանրապետության և Հարավ-Ոսեթիայի Ինքնավար Շրջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին առընթեր ընտրական հանձնաժողովները կազմում են սույն Կոմիտեների Նախագահությունները։

Հանձնաժողովները բաղկացած են՝ մի նախագահից, վորին հաստատում է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

Նախագահությունը, համապատասխան դաշնակից և ինքնավար միավորի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի յերկու ներկայացուցչից, Արհեստակցական Միությունների միավորումների, Յերիտասարդության Լենինյան Կոմունիստական Միության, Վրաստանի Կոմկուսի բանվորուհիների բաժնի, տեղական քաղաքային խորհրդի, ազգային փոքրամասնությունների և Կարմիր Բանակի մի մի ներկայացուցչից և գյուղացիական փոխադարձ ընկերությունների յերկու ներկայացուցչից։

Այս հանձնաժողովները գործում են սույն հրահանգի համաձայն։

13. Գավառական ընտրական հանձնաժողովները կազմում են գավառական գործադիր կոմիտեների նախագահությունները 9—11 անդամից բաղկացած կազմով՝ մի նախագահից, գավառական՝ գործադիր կոմիտեի, գավառական արհեստակցական բյուրոյի, Յերիտասարդության Լենինյան Կոմմունիստական Միության, Վրաստանի Կոմկուսի բանվորուհիների բաժնի, գավառական քաղաքի խորհրդի և ազգային փոքրամասնությունների, գավառական գյուղացիական փոխադարձ ընկերության, նույնպես և Կարմիր բանակի և նավատորմղի ներկայացուցիչներից (այնտեղ, որտեղ տեղավորված են նրանց մասերը)։

Նանոթություն. Գավառական ընտրական հանձնաժողովները ոգտվում են գավառական գործադիր կոմիտեների ապարատով։

14. Թիֆլիս քաղաքի և նրա գավառի համար Թիֆլիսի Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը կազմում է գավառա-քաղաքային ընտրական հանձնաժողով, որը բաղկացած է մի նախագահից և Թիֆլիսի Գործադիր Կոմիտեյի, Թիֆլիսի Քաղաքային Խորհրդի, Վրաստանի արհեստակցական միությունների խորհրդի, Յերիտասարդության Լենինյան Կոմունիստական Միության, Վրաստանի Կոմկուսի բանվորուհիների և գեղջկուհիների բաժնի, Կարմիր բանակի և նավատորմղի, ազգային փոքրամասնությունների և արտադրության հետ անմիջապես կապված բանվորների ներկայացուցիչներից։

15. Փոթի քաղաքի համար Փոթիի Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը կազմում է Քաղաքային Ընտրական Հանձնաժողով, որը բաղկացած է՝ մի նախագահից, Փոթիի Քաղաքային Խորհրդի, Արհեստակցական Միությունների միավորումների, Յերիտասարդության Լենինյան Կոմմունիստական Միության, Վրաստանի Կոմկուսի բանվորուհիներն բաժնի, Կարմիր բանակի և նավատորմղի, ազգային

փոքրամասնությունների և արտադրության հետ անմիջապես կապված բանվորների ներկայացուցիչներից։

16. Գավառական, Թիֆլիսի գավառա-քաղաքային և Փոթիի քաղաքային հանձնաժողովների նախագահներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջարկությամբ, նշանակում է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։

17. Սուխում և Բաթում քաղաքներում խորհուրդների ընտրություններն ըստ պատկանելության կատարում են Աբխազիայի Սոց. Խորհրդ. Հանրապետության և Աճարիստանի Ինքնավար Սոց. Խորհրդ. Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին առընթեր կազմած ընտրական հանձնաժողովները։ Հիշած Կենտրոնական Գործադիր Կոմիտեների Նախագահությունները ընտրություններ կատարելու համար կարող են կազմել մատնանշած քաղաքներում քաղաքային ընտրական հանձնաժողովներ։

18. Ճիաթուրի, Խաշուրի, Բորժոմ և Սամտրեդի քաղաքներում կազմվում են քաղաքային ընտրական հանձնաժողովներ, յոթ հոգուց բաղկացած՝ մի նախագահից, որին հաստատում է համապատասխան գավառական գործադիր կոմիտեն և համապատասխան քաղաքային խորհրդի, արհեստակցական միությունների, Կարմիր բանակի, Յերիտասարդության Համամիութենական Լենինյան Կոմունիստական Միության ներկայացուցիչներից և բանվորուհիների մի ներկայացուցչից, որին ընտրում է կանանց և բանվորուհիների պատվիրակների համաքաղաքային ժողովը։

19. Գավառական քաղաքներում և Ցագերի վայրում ընտրություններ կատարելը հանձնարարվում է անմիջապես գավառական ընտրական հանձնաժողովներին, իսկ Շահումյան և Խոնի քաղաքներում—տեղական թեմական ընտրական հանձնաժողովներին։

20. Թիֆլիս քաղաքի առանձին ռայոններում ընտրություններ կատարելու համար Թիֆլիսի Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը կազմում է ռայոնական ընտրական հանձնաժողովներ, բաղկացած վոչ ավելի քան 5 – 7 անդամից։ Ռայոնական ընտրական հանձնաժողովների նախագահներին նշանակում է Թիֆլիսի Գործադիր Կոմիտեն։ Բացի այդ, նույն կարգով և նույն կազմով Թիֆլիսում տեղավորված զորամասերում ընտրություններ կատարելու համար կազմվում է կայազորային ընտրական հանձնաժողով։

Նանոթություն։ Սույն հոդվածի մեջ մատնանշած կարգով կարող

են կազմվել ռայոնական ընտրական հանձնաժողովներ, նույնպես և Սուխում, Բաթում, Փոթի քաղաքներում և գավառական քաղաքներում ըստ պատկանելության, Աբխազիայի պաշնակից Սոց. Խորհրդ. Հանրապետության և Ադարիստանի Ինքնավար Ս. Խ. հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեների Նախագահությունների, Փոթիի Գործադիր Կոմիտեյի նախագահության և գավառական գործադիր կոմիտեների նախագահությունների վորոշումներով։

21. Թեմական ընտրական հանձնաժողովները ընտրվում են 7 անդամից բաղկացած կազմով, այն է՝ մի նախագահից, թեմական խորհրդի յերկու ներկայացուցչից, Յերիտասարդության Լենինյան Կոմունիստական Միության, կանանց պատվիրակների ժողովների մի-մի ներկայացուցչից և գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերությունների յերկու ներկայացուցչից, նույնպես և Կարմիր բանակի և Նավատորմղի ներկայացուցչից (յեթե նրանց մասերը տեղավորված են սույն վայրերում)։ Թեմական ընտրական հանձնաժողովի անդամներին առաջադրում են թեմական խորհուրդներն և հաստատում են գավառական գործադիր կոմիտեները, վորոնք միաժամանակ պերսոնալ կերպով նշանակում են թեմական ընտրական հանձնաժողովների նախագահներին։

Ծանոթություն։ Թեմական ընտրական հանձնաժողովներն իրենց աշխատանքների համար ոգտվում են թեմական գործադիր կոմիտեների ապարատով։

22. Գյուղական ընտրական հանձնաժողովները համապատասխան վայրերում (10-րդ հոդվ. ծանոթություն) կազմվում են հինգ հոգուց՝ մի նախագահից, յերկու ներկայացուցչից գյուղական խորհրդից և մի-մի ներկայացուցչից՝ կանանց պատվիրակների ժողովներից, փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունից և Կարմիր բանակի և Նավատորմղի ներկայացուցչից (այն վայրերում, վորտեղ տեղավորված են նրանց մասերը)։

Ծանոթություն։ Գյուղական ընտրական հանձնաժողովներն իրենց աշխատանքի համար ոգտվում է գյուղական խորհրդի և համապատասխան թեմական գործադիր կոմիտեյի ապարատով։

23. 10-րդ հոդվածում մատնանշած ընտրական հանձնաժողովները կազմվում են խորհուրդների ընտրությունների ժամանակ և ընտրական կամպանիան ավարտելուց մի ամսվա ընթացքում լուծվում են Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կարգադրությամբ։

24. Ընտրական հանձնաժողովները պարտավոր են՝

ա) համապատասխան տերիտորիայի վրա վերահասու լինել ընտրությունների որինակությանն և ընտրական կամպանիայի համար սահմանած ժամկետների կանոնների և նորմաների կատարմանն, և թույլ չտալ նրանց խախտումը.

բ) վերահասու լինել, վորպեսզի ընտրությունների ժամանակ ընտրողների վրա վարչական ճնշում չգործադրվի։

գ) ղեկավարել ստորադաս ընտրական հանձնաժողովների աշխատանքները.

դ) առաջադրել համապատասխան գործադիր կոմիտեներին ստորադաս ընտրական հանձնաժողովներին և առանձին անդամներին հեռացնելու մասին.

ե) հաշիվ պահանջել ստորադաս ընտրական հանձնաժողովներից ընտրության ընթացքի մասին և սահմանած ձևով տեղեկություններն ամբողջ նյութի հետ միասին ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողովներին և համապատասխան գործադիր կոմիտեներին։

զ) սահմանած ժամկետներին քննել ստորադաս ընտրական հանձնաժողովների դեմ և մասնավորապես ընտրական իրավունքից սխալանոն զրկելու համար տված գանգատները.

ը) առաջադրել վերադաս ընտրական հանձնաժողովներին սույն հրահանգի 64-րդ հոդվածում նախատեսված դեպքերում չհաստատել ընտրություններն թե ամբողջապես և թե մասնակի՝ առանձին պատվիրակների նկատմամբ.

թ) ուղարկել իր ներկայացուցիչներին ծանոթանալու համար ստորադաս հանձնաժողովների աշխատանքներին և ընտրական կամպանիայի ընթացքին.

25. Քաղաքներում ռայոնական ընտրական հանձնաժողովներին, իսկ ռայոնական ընտրական հանձնաժողովներ չլինելու դեպքում — քաղաքային հանձնաժողովներին, բացի վերև մատնանշած պարտավորություններից, հանձնարարվում է՝

ա) կազմել և հաստատել ընտրական իրավունք ունեցող անձանց (ընտրողների) ցուցակը.

բ) կազմել, քննել, ստուգել և հրապարակել ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը.

գ) ուղարկել ընտրողներին անվանական ընտրական ծանուցա-

գրեր և դիմել ուրիշ միջոցների տեղեկացնելու ընտրական ժողովների տեղի և ժամանակի մասին.

դ) նշանակել իր լիազորներին առանձին ընտրական խմբակների համար՝ արհեստակցական միութիւնների, տնային տնտեսուհիների, տնայնագործների, գյուղացիների, Կարմիր բանակայիների համար և այլն։

Ծանոթություն 1: Այն քաղաքներում, ուր չեն կազմակերպված քաղաքային ընտրական հանձնաժողովներ, սույն հոդվածում մատնանշած ֆունկցիաները հանձնարարվում են ընտրական այն հանձնաժողովներին, որոնց սույն հրահանգի համաձայն հանձնարարված է այս քաղաքներում ընտրությունները կատարելը։

Ծանոթություն 2: Թիֆլիսում անվանական ընտրական ծանուցագրերն ուղարկվում են միայն այն ընտրողներին, որոնք չեն մտնում ձեռնարկությունների և հիմնարկությունների մեջ և չեն միացած արհեստակցական միութիւնների միջոցով։

26. Թեմական ընտրական հանձնաժողովներին, նույնպես և գյուղական ընտրական հանձնաժողովներին (ուր նրանք կազմված են), բացի սույն հրահանգի 24-րդ հոդվածից բխող պարտականություններից, հանձնարարվում է՝

ա) ռայոնը ընտրական մասերի բաժանելը.

բ) խորհուրդների ընտրության համար շրջանամասի լիազորներ նշանակելը.

գ) ընտրական իրավունքով ոգտվող անձանց (ընտրողների) ցանկեր կազմելն ու հաստատելը.

դ) ընտրական իրավունքից զրկված անձանց ցանկեր կազմելը, քննելը, ստուգելն և հրապարակելը.

ե) ընտրական ժողովների տեղի և ժամանակի մասին տեղեկացնելը, քաղաքացիներին ընտրական ծանուցագրեր ուղարկելը։

ԳԼՈՒԽ III

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

27. Թեմական, գյուղական և քաղաքային խորհուրդները պահում են մշտական անվանական հաշվառք այն անձանց նկատմամբ, որոնք զրկված են ընտրական իրավունքից. այս հաշվառքը պահվում է յուրաքանչյուր գյուղի և քաղաքի համար առանձին։

28. Ընտրական իրավունքից զրկվածների հաշվառությունը կատարվում է վավերագրի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա։

Իբրև այդորինակ տեղեկություններ հանդիսանում են՝

ա) դատարանով ընտրական իրավունքից զրկվածների նկատմամբ—դատավճիռների պատճենները կամ համապատասխան դատական մարմիններից տրված տեղեկանքները.

բ) շահ ստանալու նպատակով վարձու աշխատանք կիրարկողների, նույնպես և անաշխատ յեկամուտով ապրողների նկատմամբ-յեկամտային և արդյունաբեր զբաղման նրանց կողմից վճարած հարկի մասին ֆինանսական մարմինների տեղեկությունները և նրանց կողմից մուծած ապահովագրական վճարների մասին ապահովագրական գանձարկղների տված տեղեկությունները.

գ) առևտրով պարապողների նկատմամբ-նրանց կողմից վերցրած պատենտների մասին ֆինմարմինների տեղեկանքները.

դ) հոգեպես հիվանդների և խելակորույսների նկատմամբ-նրանց հոգեպես հիվանդ կամ խելակորույս ճանաչելու մասին առողջապահական մարմինների կազմած ակտերը կամ նրանց վավերացրած պատճենները, իսկ խնամակալության տակ գտնվողների նկատմամբ—խնամակալության համապատասխան մարմինների տեղեկանքները.

ե) նախկին ոստիկանության ծառայողների և գործակալների, կրոնական պաշտամունքների սպասարկուների և սույն հրահանգի 5-րդ հոդվածում մատնանշած բոլոր այլ անձանց նկատմամբ-վարչական մարմինների կամ թեմական գործադիր կոմիտեների և թեմական կամ գյուղական խորհուրդների տեղեկանքները։

29. Թեմական, գյուղական, ռայոնական (կամ քաղաքային) և գավառական ընտրական հանձնաժողովները, ըստ պատկանելության, կազմում և հաստատում են ընտրողների ցանկերը՝ գյուղական վայրերում—յուրաքանչյուր առանձին գյուղի համար, իսկ քաղաքներում—ըստ արտադրական և արհեստակցական միավորների։ Ձեռնարկությունների և հիմնարկությունների մեջ չմտնող և արհեստակցական միութիւններով չկապված ընտրողների ցանկերը կազմվում են տերիտորյալ միավորների հիման վրա (ռայոն, շրջանամաս և այլն)։

Ծանոթություն: Թիֆլիսում չեն կազմում ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակները։

ՀՍՍՌ

30. Թեմական, գյուղական և քաղաքային խորհուրդների կողմից ներկայացրած ցանկերի հիման վրա (հոդ. հոդ. 27—28) նախկին հոդվածում մատնանշած ընտրական հանձնաժողովները կազմում և հաստատում են ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները։ Ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակները կազմելիս ընտրական հանձնաժողովները յուրաքանչյուր անհատի նկատմամբ սույն հրահանգի 28-րդ հոդվածում մատնանշած վավերագրային տեղեկությունների հիման վրա պարտավոր են ստուգել, թե վորքան կանոնավոր կերպով է այս կամ այն անհատը զրկված ընտրական իրավունքներից։

Ծանոթություն։ Թիֆլիսի ռայոնական ընտրական հանձնաժողովները ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմելիս 28-րդ հոդվածում մատնանշած վավերագրային տեղեկությունների փոխարեն կարող են ոգտվել շահագրգռված անձնավորությունների և վկաների հարցափորձով ստացած տեղեկություններով։

31. Ընտրական հանձնաժողովները համապատասխան խորհրդի ընտրությունից վոչ ուշ քան 20 որ առաջ պարտավոր են հրապարակել ընտրական իրավունքից զրկվածների ցանկը, տպագրելով տեղական թերթերում, կախելով տեսանելի տեղերում, հայտարարելով ընդհանուր ժողովներում և այլն։

32 Հաստատած ցանկի մի որինակն ընտրական հանձնաժողովն ուղղում է համապատասխան խորհրդին, իսկ մյուս որինակը — վերադաս ընտրական հանձնաժողովին։

ԳԼՈՒԽ IV

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

33. Ընտրական հանձնաժողովի վորոշումով ընտրական իրավունքից զրկված անձինք սույն վորոշման դեմ կարող են բողոքել ցանկը հրատարակելու որից յոթ որվա ընթացքում, յեթե նրանց կարծիքով ընտրական իրավունքներից զրկելը հակասում է ՎՍԽՀ Սահմանադրությանը և սույն հրահանգի 4—6 հոդվածներին։

34. Գանգատները ներկայացվում են ցուցակը հաստատած ընտրական հանձնաժողովին։ Ընտրական հանձնաժողովը պետք է վերաքննի իր վորոշումն և կայացնի համապատասխան վճիռ։ Գանգատը հարդելու դեպքում ընտրական հանձնաժողովն այս մասին հաղորդում է գանգատավորին, մերժելու դեպքում ընտրական հանձնաժողովն յերեք որվա ընթացքում գանգատն իր յեզրակացության հետ միասին ուղղում է վերադաս ընտրական հանձնաժողովին (այսինքն, գյուղական հանձնաժողովը—թեմականին, թեմականը—գավառականին, ռայոնականը—քաղաքայինին կամ գավառականին ըստ պատկանելույն, քաղաքայինը կամ գավառականը կենտրոնականին։

35. Վերադաս ընտրական հանձնաժողովը նախընթաց հոդվածի կարգով ստացած գանգատը քննում է յերեք որվա ընթացքում։ Քննության հետևանքները գանգատավորին տեղեկացնելու համար վերադաս ընտրական հանձնաժողովը հաղորդում է ստորադաս ընտրական հանձնաժողովին, բացի սույն հրահանգի 36-րդ հոդվածում նախատեսած դեպքից։

36. Յեթե թեմական ընտրական հանձնաժողովը մերժում է գյուղական ընտրական հանձնաժողովի վորոշման դեմ տրված գանգատը, սույն գանգատը նա ուղարկում է գավառական ընտրական հանձնաժողովին։ Վերջինս քննում է գանգատն յերեք որվա ընթացքում և կայացնում է իր վճիռը, վորով կամ հաստատում է գյուղական ընտրական հանձնաժողովի վորոշումը կամ հարգում է գանգատը, վորի մասին հաղորդում է համապատասխան ընտրական հանձնաժողովին և գանգատավորին։

37. Ընտրական հանձնաժողովների աշխատանքները վերջանալուց հետո ընտրական իրավունքից զրկվածների գանգատների առիթով ծագած հարցերի քննությունը կատարում են համապատասխան խորհուրդներն և գործադիր կոմիտեները, վորոնց վորոշումների դեմ կարելի յե բողոքել վերադաս գործադիր կոմիտեներին։

38. Գերագույն կառավարչության կարգով ընտրական իրավունքից զրկելու վերաբերյալ հարցերը լուծում է Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։

ԳԼՈՒԽ V

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

39. Յուրաքանչյուր ընտրող իրագործում է իր ընտրական իրավունքը մի տեղում։ Յեթե իր աշխատանքի կամ զբաղմունքի պատճառով տվյալ անձնավորությունն ոգտվում է ընտրական իրավուն-

քով մի քանի հիմնարկություններում կամ տեղերում, նրան իրավունք է վերապահվում ընտրելու, թե վորտեղ է նա մասնակցելու ընտրություններին։

40. Խորհրդների անդամների և թեկնածուների ընտրությունը կատարվում է ընտրական ժողովներում։

Ծանոթություն։ Թիֆլիս քաղաքում ձեռնարկությունների և հիմնարկությունների մեջ մտնող կամ արհեստակցական միություններով կապված ընտրողներն ընտրություններին մասնակցելու համար առանձին տոմսակներ են ստանում իրենց ձեռնարկությունից և հիմնարկությունից կամ համապատասխան արհեստակցական միությունից։

41. Ընտրական ժողովները գումարում է ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորը։

42. Ընտրական ժողովի տեղի և ժամանակի մասին ընտրողները տեղեկություն են ստանում անվանական ծանուցագրերով, նույնպես տեսանելի տեղերում կպցրած համապատասխան հայտարարություններից, թերթերում հայտարարելուց և այլն, Այս բոլորը տեղի յե ունենում ժողովը բաց անելուց վոչ ուշ քան 5 որ առաջ։

43. Քաղաքներում ընտրական ժողովները կազմվում են արտադրական և արհեստակցական միություններում (ձեռնարկություններում, հիմնարկություններում և արհեստակցական միություններում)։

Այն քաղաքացիների համար, վոր չեն մտնում ձեռնարկությունների և հիմնարկությունների և արհեստակցական միությունների մեջ, ինչպես որինակ՝ անայնագործների, արհեստավորների, տան տնտեսուհիների, կառապանների համար և այլն, ընտրական ժողովները տեղի յեն ունենում ըստ տերրիտորիալ միությունների (ռայոնների, քաղաքամասերի և այն)

44. Թեմական և գյուղական խորհուրդների համար ընտրությունները կատարվում են յուրաքանչյուր գյուղում, յեթե բնակիչների թիվը 100-ից պակաս չե։ Յեթե բնակչության թիվը 100-ից պակաս ե, առանձին գյուղերը միանում են մի պատվիրակ ընտրելու համար։

45. Ընտրական հանձնաժողովները կարող են յուրաքանչյուր գյուղը բաժանել առանձին ընտրական մասերի, յեթե միայն յուրաքանչյուր ընտրական մասի բնակիչների թիվը 100-ից պակաս չե։

46. Բոլոր ընտրական ժողովներում պետք է տեղի ունենա ընտրությանը ներկա յեղողների հաշվառությունը։

Ընտրական ժողովներում կարող են ներկա լինել միայն ընտրական իրավունք ունեցող անձինք։

47. Ընտրական ժողովը որինական է համարվում, յեթե ներկա յե տվյալ ընտրական մասի ընտրողների ընդհանուր թվի 35%-ից վոչ պակասը։

48. Յեթե ընտրական ժողովին ներկա յե ընտրողների 35%-ից պակասը, ժողովը համարվում է չկայացած, վորի մասին արձանագրություն է կազմվում և կցվում ընտրական գործին։ Ընտրական ժողովը այս դեպքում տեղի յե ունենում մոտակա որերից մեկում, վորի մասին հաղորդագրություն են ստանում ընտրողները։

49. Ընտրողական ժողովը բաց է անում ընտրական հանձնաժողովի լիազորը և վարում է յերեք հոգուց ընտրած նախագահությունը, ընտրական հանձնաժողովի լիազորի նախագահությամբ։

50. Ընտրական ժողովը բաց անելուց հետո նախագահը պարտավոր է՝

ա) ծանոթացնել ժողովականներին ընտրությունների կարգի հետ և դրա համար կարդում է սույն հրահանգի 1—8 հոդվածները, նույնպես և 38 – 58 հոդ. հոդ.

բ) ծանուցանում է ընտրողների և ընտրությանը ներկա յեղողների թիվը։

գ) ծանուցանում է ընտրական ժողովից առաջ և ժողովում առաջարկած թեկնածուների ցուցակները և առանձին թեկնածուների անունն և ազգանունը, մատնանշելով, թե ում կողմից են առաջարկվել թեկնածուները։

51. Ընտրական ժողովի որակարգը հաստատում է նույն ժողովը։

52. Ժողովի վորոշումով քվեարկությունը տեղի յե ունենում կամ ցուցակներով կամ պերսոնալ կերպով։

Ծանոթություն։ Ցուցակներով քվեարկելիս թույլատրվում է համապատասխան ցուցակից հանել առանձին թեկնածուներին։

53. Թեկնածուների ցուցակներ կամ առանձին թեկնածություններ կարող են առաջարկել թե հասարակական, կուսակցական և արհեստակցական միությունները, թե առանձին քաղաքացիները, թե ընտրական ժողովում, թե նախ քան ընտրական ժողովը, հրատարակելով մամուլի միջոցով կամ տեսանելի տեղերում փակցնելով։

54. Ընտրական ժողովներն և նրանց լիազորներն իրավունք

չունեն իրենց կողմից առաջարկել թեկնածուների ցուցակներ կամ առանձին թեկնածուներ։

55. Եթե ժողովը կարևոր է համարում, յուրաքանչյուր թեկնածությունը կարող է նախապես քննության յենթարկվել։

56, Ընտրությունները կատարվում են բաց քվեարկությամբ։ Ընտրված են համարում նրանք, վոր ստացել են քվեարկության մասնակցող ընտրողների ձայների կիսից ավելին.

Ծանոթություն։ Եթե թեկնածուների կարևոր թիվը ձայների մեծամասնություն չի ստանում, կատարվում է նոր քվեարկություն. այս դեպքում քվեարկությունից առաջ կարելի յե առաջարկել նոր թեկնածուներ.

57. Ընտրական ժողովներն ընտրում են պատվիրակներ հետևյալ հաշվով՝ Թիֆլիս քաղաքում 200 ընտրողին ընկնում է մի պատվիրակ, Քութայիս քաղաքում—150 ընտրողին, Բաթում քաղաքում—100 ընտրողին, Սուխում, Փոթի, Գորի, Ճիաթուրի, Խաշուրի, Բորջոմ և Սամտրեդի քաղաքներում—50 ընտրողին, իսկ մնացած քաղաքներում և գյուղական վայրերում յուրաքանչյուր 100 բնակչին գալիս է մի պատվիրակ։

Եթե ընտրական մասում լիակատար ընտրական նորմաներից դուրս յերևան է գալիս ընտրողների կամ բնակիչների մի այնպիսի քանակություն, վորը թեև չի հասնում սույն հոդվածով նախատեսված ընտրական նորմաներին, բայց կազմում է համապատասխան ընտրական նորմայի կիսից ավելին, խորհրդի համար ընտրվում է լրացուցիչ պատվիրակ։

58. Այն գյուղերում ու քաղաքներում, ուր մնացած բնակչությունը խորհուրդների համար պատվիրակներ է ընտրում բնակիչների ընդհանուր թվի չափով, Կարմիր բանակի կադրային մասերն և տերիտորիալ մասերի մշտական կազմն ընտրում են իրենց պատվիրակներին, հաշվելով 50 ընտրողին մի պատվիրակ, իսկ այն քաղաքներում, վորտեղ մնացած բնակիչները պատվիրակներ են ընտրում ընտրողների թվի չափով, ընտրում են իրենց պատվիրակներին նույն հաշվով, ինչպես և մնացած բնակչությունը։

Այն դեպքում, յերբ Կարմիր բանակի կադրային մասում կամ տերիտորիալ մասի մշտական կազմի մեջ այս կամ այն տեղում բացակայում է ընտրողների այն քանակությունը, վորը հարկավոր է մի պատվիրակ ընտրելու համար, ընտրության համար սույն մասը

կարող է միանալ նույն վայրում գտնվող ուրիշ մասերի հետ, իսկ յեթե այդպիսիները չլինեն կամ յեթե միանալուց հետո էլ ընտրողների թիվը բավական չլինի մի պատվիրակ ընտրելու համար, այդ մասը կամ միացած մասերը խորհրդի համար ընտրում են մի պատվիրակ։

Ծանոթություն։ Կարմիր բանակի տերիտորիալ մասերի փոփոխական կազմը պատվիրակներ է ընտրում մնացած բնակչության հետ միասին և նրա հետ հավասար նորմայով։

59. Յուրաքանչյուր ընտրական ժողով բացի պատվիրակներից ընտրում է և թեկնածուներ պատվիրակների մի յերրորդի չափով։

Խորհուրդի անդամների թեկնածուներն ընտրվում են առանձին քվեարկությամբ, պատվիրակներ ընտրելուց հետո։

60. Թեմական խորհրդի անդամներ և թեկնածուներ ընտրելուց հետո համապատասխան ընտրական ժողովներում ընտրվում են առանձին քվեարկությամբ թեմական գործադիր կոմիտեներին առընթեր վերատուգիչ հանձնաժողովներ, բաղկացած յերեք անդամից և յերկու թեկնածուից։

61. Այն դեպքերում, յերբ թեմական խորհրդի ընտրությունները տեղի յեն ունենում մի քանի ընտրական մասերում, վերատուգիչ հանձնաժողովի անդամների թեկնածությունները պետք է դրվեն բոլոր ընտրական մասերում. ընտրված են համարվում ձայների մեծամասնություն ստացած թեկնածուները, բայց վոչ պակաս քան բոլոր ընտրական ժողովներում մասնակցողների տված ձայների կեսը։

Ծանոթություն։ Վերատուգիչ հանձնաժողովների անդամ չեն կարող ընտրվել այն անձինք, վոր մատնանշված են թեմական գործադիր կոմիտեներին առընթեր վերատուգիչ հանձնաժողովների մասին կանոնադրության 2-րդ հոդվածում։

62. Ընտրական ժողովի ընթացքի և հետևանքների մասին կազմվում է սահմանած ձևով արձանագրություն։ Արձանագրությունը ստորագրում է ընտրական ժողովի նախագահությունը։

63. Ընտրական հանձնաժողովը ընտրած յուրաքանչյուր պատվիրակի վերաբերյալ կազմում է հաստատած ձևով անկետա։

ԳԼՈՒԽ VI

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵԿԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՆՈՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

64. Ընտրությունները բեկվում են հետևյալ պատճառներով՝

ա) յեթե ընտրություններին մասնակցել են ընտրողների 35 տոկոսից պակաս ընտրողներ.

բ) յեթե ընտրություններ կատարելիս տեղի յե ունեցել ՎՍԽՀ Սահմանադրության և սույն հրահանգի վորոշումների խախտումներ։

65. Ընտրությունների բեկանումը վերև հիշած պատճառներով կարող ե տեղի ունենալ՝

ա) ամբողջապես, այսինքն, խորհրդի անդամների ամբողջ կազմի նկատմամբ.

բ) մասնակի, այսինքն, առանձին ընտրական շրջանամասերում, խորհրդի առանձին անդամների նկատմամբ։

66. Ընտրությունները բեկանվում են ամբողջապես, յեթե պատվիրակների կիսից ավելին ընտրվել ե ապորինի (հոդ. 64)։ Յեթե ապորինի ընտրությունները տեղի յեն ունեցել մի կամ մի քանի ընտրական շրջամասերում, վորտեղ ընտրված ե պատվիրակների նվազագույն մասը, ընտրությունները բեկանվում են միայն սույն ընտրական շրջամասերի նկատմամբ, իսկ մնացած շրջամասերում ընտրությունները համարվում են որինավոր։

67. Ընտրությունները կարող են բեկանվել դաշնագրային կամ ինքնավար Հանրապետության և շրջանի կամ գավառի ինչպես ամբողջ տերիտորիայի վերաբերյալ, նույնպես և սույն տերիտորիայի առանձին մասերի վերաբերյալ։ Ընտրությունների բեկման մասին հայտարարվում ե ի հանուր գիտություն կամ հրապարակելով տեղական թերթերում կամ ընտրողների ժողովներում։

68. Կատարած ընտրությունների դեմ գանգատներն և հայտարարությունները տրվում են գրավոր՝ ընտրությունները ղեկավարող ընտրական հանձնաժողովներին, ընտրություններից յոթ որվա ընթացքում։

69. Ընտրական հանձնաժողովը տրված հայտարարությունը կամ գանգատը իր բացատրության հետ միասին յերեք որվա ընթացքում ներկայացնում են վերադաս ընտրական հանձնաժողովին։

Վերադաս ընտրական հանձնաժողովը յոթ որվա ընթացքում

պարտավոր ե քննել այս հայտարարություններն ու գանգատները. ընտրությունների մասնակի անկանոնության մասին հարցերը լուծում ե իր իշխանությամբ, իսկ ընտրություններն ամբողջապես հաստատելու կամ բեկանելու վերաբերյալ հարցերն իր յեզրակացության հետ միասին ներկայացնում ե իրեն համապատասխան գործադիր կոմիտեյի լուծմանը։

70. Ընտրությունները բեկանելու դեպքում նոր ընտրությունները կատարվում են սույն հրահանգով սահմանած կարգով. յեթե ընտրությունները բեկանված են ամբողջապես, նոր ընտրություններ կատարելու համար կազմակերպվում ե համապատասխան ընտրական հանձնաժողով, նոր կազմով։

71. Աշխատանքներն ավարտելուց հետո ընտրական հանձնաժողովներն ընտրության վերաբերյալ բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեյին։

72. Այն դեպքում, յերբ ընտրողները հետս են կոչում պատվիրակներին, խորհուրդը նրանց փոխարեն հրավիրում ե նույն ընտրական շրջանամասի թեկնածուներին, իսկ այդպիսիների չլինելու դեպքում նշանակում ե խորհրդի առանձին անդամների լրացուցիչ ընտրություններ։

Լրացուցիչ ընտրությունները հաստատում են համապատասխան թեմական, գյուղական կամ քաղաքային խորհուրդները։

73. Նախընթաց հոդվածում մատնանշած կարգը պահվում ե և այն դեպքում, յերբ խորհուրդների կազմից դուրս են գալիս առանձին անդամներ մահվան, բնակավայրը փոխելու, ընտրական իրավունքը կորցնելու պատճառով և այլն։

74. Այն դեպքում, յերբ 72—73 հոդվածներում մատնանշած պատճառով պետք ե նորից ընտրվեն խորհրդի անդամների կիսից ավելին, սահմանած կարգով կատարվում ե խորհրդի անդամների ամբողջ կազմի վերընտրությունը։

Վերընտրությունները հաստատում են վերադաս գործադիր կոմիտեները։

75. Այն դեպքում, յերբ Գործադիր Կոմիտեյի կազմից հեռանում ե նրա անդամների կիսից ավելին, տեղի յե ունենում Գործադիր Կոմիտեյի ամբողջ կազմի վերընտրությունը։

ԳԼՈՒԽ VII

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

76. Նոր ընտրած խորհրդի առաջին կազմակերպչական նիստը գումարում ե ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը։ Այս նիս-

տում ընտրում են խորհրդի գործադիր կոմիտեները։ Նույն կարգով գումարվում են և խորհուրդների համագումարները։

77. Այն վայրերում, ուր գոյություն ունեն գյուղական խորհուրդներ, խորհուրդների թեմական համագումարները կազմվում են գյուղական խորհուրդների ներկայացուցիչներից, հաշվելով բնակչության 100 հոգուն մի ներկայացուցիչ։

78. Խորհուրդների գավառական համագումարը կազմվում է գավառի տերիտորիայի վրա գոյություն ունեցող խորհուրդների ներկայացուցիչներից հետևյալ հաշվով. այն վայրերում, որտեղ խորհուրդների անդամներն ընտրվում են բնակչության քանակի համեմատ, բնակչության 1000 հոգուց ընտրվում է մի պատվիրակ, իսկ այն վայրերում, ուր խորհրդի անդամներն ընտրվում են ընտրողների թվի համեմատ, ընտրողների 200 հոգուց ընտրվում է մի պատվիրակ։

Ծանոթություն։ Այն վայրերում, ուր գոյություն ունեն գյուղական խորհուրդներ, խորհուրդների գավառական համագումարի պատվիրակներն ընտրվում են խորհուրդների թեմական համագումարներում։

79. Խորհուրդների Համավրացական Համագումարը կազմվում է դաշնագրային, ինքնավար միավորների և գավառական խորհուրդների համագումարների և Փոթի քաղաքի խորհրդի ներկայացուցիչներից, հետևյալ հաշվով. այն բնակավայրերում, որտեղ խորհուրդների անդամներն ընտրվում են բնակչության քանակի համեմատ, բնակչության 10,000 հոգուց ընտրվում է մի ներկայացուցիչ, իսկ այն բնակավայրերում, ուր խորհրդի անդամներն ընտրվում են ընտրողների թվի համեմատ, ընտրողների 2000 հոգուց ընտրվում է մի ներկայացուցիչ։

80. Համագումարների համար կատարած ընտրությունների կանոնավորությունը և պատվիրակների լիազորությունները ստուգելու համար յուրաքանչյուր համագումար ընտրում է մանդատային հանձնաժողով։

81. Մանդատային հանձնաժողովը ստուգման հետևանքների մասին զեկուցանում է խորհուրդների համագումարին, որն և վճիռ է հանում խորհուրդների համար կատարած ընտրությունների կանոնավորության և ներկայացուցիչների լիազորության մասին։

Ծանոթություն։ Գործադիր կոմիտեյի նախկին կազմի անդամները, որոնք համագումարի ներկայացուցիչներ չեն, վայելում են խորհրդակցական ձայնի իրավունք։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ Գիտ. Գրադարան
Ա. Մ. Գորկու անվան

82. Խորհուրդներն և Խորհուրդների համագումարները կարող են իրենց նախագահության և գործադիր կոմիտեների համար, նույնպես և վերագաս համագումարների համար ներկայացուցիչներ ընտրել ոչ միայն սույն խորհուրդների և համագումարների անդամներից, այլ առհասարակ ընտրական իրավունք վայելող բոլոր քաղաքացիներից, անկախ նրանց բնակության կամ աշխատանքի տեղերից։

83. Համագումարի զբաղմունքները սկսելուց հետո, իշխանության գործադիր մարմինը շարունակում է մնալ նախկին կազմի համապատասխան գործադիր կոմիտեն, որի ֆունկցիաները դադարում են միմիայն նոր կազմի գործադիր կոմիտեյի առաջին նիստը գումարելու հետ միասին։

84. Նոր գործադիր կոմիտե ընտրելուց հետո գումարվում է նախկին կազմի հետ միասին սույն գործադիր կոմիտեյի կազմակերպչական նիստը։ Սույն նիստում ընտրվում են գործադիր կոմիտեյի նախագահը և նախագահությունը, նույնպես և առանձին բաժինների վարիչները։

Ծանոթություն 1։ Գործադիր կոմիտեն ընտրում է իր նախագահությունն և նախագահին պարտավորապես իր անդամների կազմից։

Ծանոթություն 2։ Գործադիր կոմիտեյի նախկին կազմի անդամները, որոնք չեն մտել նոր կազմի մեջ և վարում են գործադիր կոմիտեյի առանձին բաժինները, սույն նիստում վայելում են խորհրդակցական ձայնի իրավունք։

85. Գործադիր կոմիտեյի նոր ընտրած նախագահն և բաժինների վարիչները, պաշտոնի մեջ մտնելիս, համապատասխան ակտերով նախկին կազմից ընդունում են գործերն և գույքը։

Խորհուրդների Համավրացական Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի նախագահի Տեղակալ՝ Ս. Թոդրիա

Խորհուրդների Համավրացական Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ Ճ. Մաթիկաշվիլի

1927 թ. դեկտեմբերի 16-ին։
Թիֆլիս — Պալատ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0206401

35. 674